

ծածկուած է նոր շէնքերով և կարելի չ'ըլլար տեսնել զայն մեծ պողոտայէն:

Մենք Եազուպիէի մասին պատմական տեղեկութիւններ տալէ առաջ հոս պիտի նշանակենք ձեռնհաս գիտուններու կողմէն գրի առնուած ճարտարապետական քննութեանց երկու տեղեկագիրները. յետոյ պիտի յիշենք Եազուպիէի նախկին հիմնարկութիւնը իր պարագաներով, նոյն հիմնարկութեան յարակցութիւնները, և պիտի պարզենք թէ Եազուպիէն մին եղած է ա'յն հայկական վանքերէն՝ որ հին ժամանակները զօյութիւն ունէին Ս. Գաղաքին մէջ, ըստ մեր յիշատակարանաց:

1.— Նոյն շէնքին առաջին ճարտարապետական քննութիւնը գրի առած է Բրօֆ. Herr Baurath von Schick, որուն գրուածքէն կը հասկցուի թէ «Եազուպիէն դուն ուրեք կը գործածուի եւ քիչ անգամ նորոգուած է և թէ լու պայմաններու մէջ պահպանուած է. ո'չ նորոգութեան և ո'չ ալ փոփոխութեան նշան կը կրէ և կը թուի թէ իրօք իր շինութենէն ի վեր անփոփոխ մնացած է: Կը կարծուի որ Խաչակրաց ժամանակի շինուածք մ'է և վանքի մը նմանութիւնը ունի, թէև իբր բնակարան ալ գործածուած իսկ կրնայ ըլլալ: Ժամանակ մը Դաւթի բերդին մէջ բնակող զինուորներուն աղօթատեղին եղած է ան, բայց յիսուն տարուան ընթացքին՝ շատ քիչ անգամ գործածած են զայն. վասն զի Միջնաբերդին մէջ կար աղօթքի համար ուրիշ տեղ մը: Խրիմի պատերազմին՝ կարճ ժամանակի մը համար գործածուած է իբր տաղաւար: Նոյն շէնքին արևմուտքը կը գտնուի փոքր գաւիթ մը: Ուղեգիրներէ յիշուած եօթն սինակոկներէն մին չէ ասիկա, և աւելի նոր է քան մօտը գտնուած կիսաւեր Ս. Թովմայի եկեղեցին: Կողակին մօտ փոքր սենեակներ չունի, բայց ծածկուած է կիսաշղջանակային կամարով մը: Ինչպէս իր անունը ցոյց կուտայ՝ նուիրուած էր ան Ս. Յակոբ Առաքելոյն անուան»:

2.— Եազուպիէի ճարտարապետական երկրորդ քննութիւնը կատարած են Hugues Vincent et F. M. Abel Դոմինիկեան Հայրերը որոնց Jerusalem Nouvelle խորագրով երկասիրութեան մէջ (Բ. Հատոր, էջ 558-561) հետեւեալը կը կարդանք:

«Ժե. դարու վերջերը Միւճիր էտ-տին ժամանակագիրը իր պատմութեան մէջ կը յիշատակէ Եազուպիէն: Այդ ժամանակ նոյն շէնքը կը ճանչցուէր իբր Զավիէ Պաղատացի Շէյխ Շէմս էտ-